№ 62 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՄԱՐՏԻ № 62

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Кº, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

ՇՈՒՇԻ—ԵՒԼԱԽ ՊՕՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏԸ

նորից անցաւ Լ. ՎԱՐԱԶԵԱՆԻ կարգադրութեան տակը: Ձեռք են առնված խիստ միջոցներ՝ կատարել երթևեկութիւնը առանց ուշացնելու կայարաններում: Ծառայողների կազմը նորոգված է քաղաքավարի և կարգապահ մարդկանցով: Պատրաստված են կայարաններում հանգստանալու և ճաշելու համար մաքուր և յարմար սենեակներ, իսկ Եւլախ, Աղդամ, Խօջալլու կայարաններում գիշերել ցանկացողների համար պատրաստված են ձրի և կահաւորված տաք սենեակներ:

Փակ կառքերի, ամեն տեսակ բաց կօլեասկաների և դիլիժանսների համար, նաև առանձին տեղերի համար դիլիժանսներում, պատուէրները ընդունվում են նամակներով և հեռագրերով օր առաջ և պատրաստ տրվում են կառքերը գնացքները վօկզալ հասած րոպէին: Առանձին տեղի գինը մի մարդու համար դիլիժանսում, առ այժմ, Շուշում 3 ր., Եւլախում 4 ր.: Հասցէն՝ Евлахъ, Контора почтовой станціи.

(օ. մ.) առ. 179. 15—7

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչէվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող միայն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութինեան, Ն. Ն. Վեսելօվզօրով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Տահպարոնեանց: Կօնսուլտանտ՝ պրոֆեսօր Մ. Ս. Սուբբոտին:

(հ. կ.) առ. 779. 100—40

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ:

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:

Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:

Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա): Հեռախօս 7—92.

(ա. օ.) առ. 92. 100—34

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան

ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի:

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով:

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Ռտիշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):

(ե. հ. կ.) առ. 748. 100—70

ԲԺԻՇԿ
ՑՈՒՑԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.

առ. (կ. ե. հ.) 4. 100—32

ՉԸ ԿԱՅ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Որքան ծանր է խոստովանել, որ Անդրկովկասը չունի փոքր ի շատէ բաւարար վիճակագրութիւն։

Դա հասարակական մի յանցանք է քսաներորդ դարում։

Այո, յանցանք է։

Յանցանք է հանրային պետական շահերի դէմ։

Արդարև, մենք ճիշդ թւեր և տեղեկութիւններ չունենք մեր ժողովրդի կեանքի և բարեկեցութեան աստիճանի մասին։

Որքան հաց և արմտիք է ստանում մեր ազգաբնակութիւնը տարվայ մէջ—չը գիտենք։ Որքան կենդանիներ ունի նա իր տնտեսութեան մէջ—անյայտ է մեզ համար։ Որքան հարստանում կամ [illegible] հարց է։

Վիճակագրութիւնը շատ անմխիթարական դրութեան մէջ է մնգանում։

Իսկ շատ ճիւղերում նա այնքան աղաւաղված և կեղծ է, որ կարելի է ասել, թէ վիճակագրութիւն չը կայ։

Դա չափազանց տխուր մի խոստովանութիւն է, որ պէտք է անենք։ Բայց այդպէս է իրականութիւնը։

Իսկ վիճակագրութիւն չունենալը կամ նրա վատ կազմակերպված լինելը՝ նշանակում է զրկված լինել ուժեղ և կարևոր պայմաններից մէկից՝ կանոնաւոր հասարակական-կուլտուրական գործունէութեան ասպարէզում։

Կարելի է արդեօք երևակայել եւրոպական կանոնաւոր զարգացող մի հասարակութիւն, որը չունենայ բաւարար վիճակագրութիւն։

Անկասկած ոչ։

Եւ լուսաւոր մարդկութիւնը շատ զգալի օգուտներ է ստանում իր վիճակագրութիւնից, վերցնելով այնտեղից ցուցումներ իր բարեկարգչական ծրագիրների մշակութեան միջոցներին։

Մենք կովկասցիներս էլ երբեմն գիտում ենք մեր երկրի մէջ եղած վիճակագրութեանը, բայց ամեն անգամ տխրութեամբ և հիասթափութեամբ համոզվում ենք, որ դա վիճակագրութիւն չէ, այլ նրա կեղծիքը, նրա արտաքին նմանողութիւնը՝ առանց ներքին էութեան և բովանդակութեան։

Եթէ կան փոքր ի շատէ բաւարար վիճակագրական թւեր, դրանք վերաբերում են ազգաբնակութեան քանակին, թէև այդտեղ էլ հրատարակված աղիւսակները միշտ հնացած են լինում և անկիրառելի՝ ժամանակակից եզրակացութիւնների համար։

Իսկ կեանքը ամեն օր մեզանից պահանջում է ճիշդ վիճակագրական տեղեկութիւններ մեր գործառնութիւնների համար։

Պէտք է ելք գտնել ներկայ անբաւարար վիճակից։

Կարիքը չափազանց մեծ է։

Կա՞ն արդեօք միջոցներ և ինչպէս։

Ա. Քալանթար

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լոյս մարտի 20-ի գիշերը Նորին Պայծառափայլութիւնը անցրեց անհանգիստ։ Մարմնի տաքութիւնը առաւօտեան 37,4 էր, զարկերակը մինչև 76 հարուած մի րոպէում՝ հազուագիւտ ընդմիջումներով, շնչառութիւնը 20—34։ Կոմսի ձայնը թուլանում է։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 մարտի

Փարիզ.—Սկսվեցին մասնաժողովի պատուիրակների նախնական խորհրդակցութիւնները պատերազմի հետ կապված ֆինանսական հարցերի լուծման համար։ Մասնաժողովի առաջին նիստը կայանալու է ապրիլի 5-ին։

Պետերբուրգ.—Քաղաքապետի օրագրում տպված է. «Գեներալ Ռադկօ Դիմիտրիևի գնացքի մեկնելուց յետոյ հասարակութեան մեծ մասը ցրվեց, իսկ մի մասը, գլխաւորապէս ուսանող երիտասարդութիւնը, ազգային օրհներգի երգեցողութեամբ դիմեց Իզմայլօվսկի պրօսպեկտով առաջ։ Սադօվայա փողոցի վրա ոստիկանութիւնը պահանջեց ցուցարարներից կանգնել։ Ի պատասխան այդ պահանջին, ցուցարարները բաժանվելով մանր խմբերի և դադարեցնելով երգեցողութիւնը՝ ցրվեցին, դիմելով դէպի Կազանի տաճարը Նէվսկի պրօսպեկտի ուղղութեամբ։ Երեկ. ժ. 9-ի մօտերը Կազանի տաճարի մօտ ժողովվեց ամբոխ, թւով մօտ 200 հոգի, որ երգելով ազգային օրհներգը և ուրա բացագանչելով՝ ոստիկանութեան պահանջով հանգիստ ցրվեց։ Յետոյ ցուցարարները, փոքր խմբերով Նևսկիի վրայով և Գօգոլի անուան փողոցով, ուղղվեցին դէպի գերմանական դեսպանատան շինութեան կողմը, բայց Իսակիէվսկի հրապարակը մտնելու ժամանակ հանդիպեցին ոստիկանական պաշտօնեաների, որոնց պահանջով ցրվեցին։ Ժամը 11-ին Սիմօնօվսկայա փողոցում ժողովվեց մօտ 300 մարդուց բաղկացած ամբոխ և օրհներգի երգեցողութեամբ դիմեց [illegible] պէկտը, ուր սերբիական դեսպանատան շինութեան առաջ ցուցարարները երգեցին ազգային երգեր ու «Տէր, փրկիր քո ժողովրդին» աղօթքը, յետոյ վերադառնալով դիմեցին բուլգարական դեսպանատան շէնքի կողմը, սակայն Մօխօվայա և Սիմօնովսկայա փողոցների անկիւնում հանդիպեցին ոստիկանների, որոնց պահանջով, երգելով վերջին անգամ օրհներգը, հանգստութեամբ ցրվեցին։ Փողոցային ցոյցերին մասնակցում էին համարեա բացառապէս բարձրագոյն և միջին կրթական հաստատութիւնների սաները, որոնց միացան փողոցներում երթևեկող անձինք։ Ցոյցին մասնակցողներից 10—15 հոգի քաղաքի զանազան տեղերում աղաղակում էին ուրա։ Միայն գիշերվայ ժամը 11-ի մօտերը հաստատվեց լիակատար կարգ ու կանոն մայրաքաղաքի փողոցներում»։

Հաագա— Օստինդիայի. արշիպելագոսի Սիօսի Տանգի և Տալանդ կղզիների վրա երկրաշարժը քանդեց շատ տներ ու կամուրջներ, փչացրեց երկաթուղագծեր։ Մարդկային զոհերի թիւը յայտնի չէ։ Վնասված տեղերը ուղարկվեց մի պատերազմական նաւ։

Կ. Պօլիս.—«Թանին» ասելով Թիւրքիան այսօր, ի պատասխան մեծ պետութիւնների հաւաքական նոտայի, համաձայնութիւն է յայտնում ընդունելու հաշտութեան նախնական պայմանները։

Արտաքին գործերի մինիստրը յանձնեց դիպլօմատիական մարմնի աւագագոյն անդամ աւստրիական դեսպանին Բ. Դրան պատասխան նոտան մեծ պետութիւնների առաջարկութեան հանդէպ։ Գործակալութեան թղթակիցը իրազեկ եղաւ, որ Բ. Դուռը սկզբունքով ընդունելով հաշտութեան պայմանները՝ ձևակերպում է մի քանի առարկութիւններ մանրամասնութիւնների վերաբերութեամբ։

Լուրերի համաձայն՝ օսմանեան գեներալիսիմուսին հրամայված է դադարեցնել մարտի 20-ի երեկոյից թշնամական գործողութիւնները։

Սպասում են Եգիպտոսից վերադարձող Քեամիլփաշային։

Հռօմ.—Եկաւ Իսմայիլ-Քէմալը։

Աթէնք.—Եկաւ Լարիսա կայարանը բուլղարական արքայազն Բօրիսը, որին անհամար ամբոխը ցնծագին ողջունեց։

Լօնդօն.—Պետական գանձատան վարչութեան թւերի համաձայն, անցեալ ֆինանսական տարում ընդամենը եկամուտ ստացվել է 1,888,001,999 ֆունտ, ծախքեր եղել են՝ 188,621,930։

Կահիրէ.—Երկար բանակցութիւններից յետոյ, յունաց կառավարութիւնը թոյլատրեց եգիպտական Կարմիր Մահիկին Եանինա ուղարկել սանիտարական խումբ՝ վիրաւորներին խնամելու համար։

[illegible] ված բիւջէի գումարը անցեալ տարվանից աւելի է 28 միլիոնով։

Բեռլին. — «Բրեսլաու» յածանաւը ներկայումս գտնվում է Պիրէյում։ Արտաքին գործերի մինիստրութեան մէջ կտրականապէս յայտնեցին ժուռնալիստներին, որ Գերմանիան չի մասնակցի Չեռնոգորիայի դէմ ձեռնարկվող ծովային ցոյցին։ Նոյնանման յայտարարութիւն արված է դիւանագէտներին։ Այդ իսկ պատճառով, ինչպէս տեղեկացաւ Գործակալութեան թղթակիցը արժանահաւատ աղբիւրից, «Բրեսլաուին» Ադրիատիկ ծովը առաքելու հրամանը միանգամայն անսպասելի եղաւ և պէտք է նկատել Աւստրիայի պահանջների հետևանք։

Որովհետև զինուորական ֆոնդը դարձել է 360 միլիոն ոսկի, պետական բանկը այժմ հնարաւորութիւն ունի պատերազմի դէպքում բաց թողնել մի միլիարդ ութսուն միլիոնի բանկնօտներ։

Բուդապեշտ. — Կիսապաշտօնական «Բուդապեշտի Հիրլապը» և այլ լրագիրներ խստագոյնս յարձակվում են Ռուսաստանի վրա իբր սրա երկդիմի վարմունքի համար Չեռնոգորիայի հարցում մեծ պետութիւնների վերաբերութեամբ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԾՈՎԱՅԻՆ ՑՈՅՑԸ ՉԵՌՆՈԳՈՐԻԱՅԻ ԴԷՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 մարտի

Լօնդօն.—Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, Սերբիան անկարող է ընդունել մեծ պետութիւնների առաջարկութիւնը նուաճված երկրներում կրօնական ազատութեան առանձին երաշխիքներ յայտարարելու մասին։

Րէյտերը տեղեկացաւ, որ մեծ պետութիւնները այսօր վճռեցին ծովային ցոյց կազմել Չեռնոգորիայի դէմ։ Այդ վճռին միացան բոլոր մեծ պետութիւնները, ուստի և դէպի չեռնոգորական ծովափը կուղարկվեն ռազմանաւեր։ Կարծիք կայ, թէ ցոյցին կը մասնակցեն մեծ բրիտանական, ֆրանսիական, աւստրիական և իտալական պատերազմական նաւերը։ Գերմանիան չի մասնակցի, որովհետև Չեռնոգորիայի մօտիկ գերմանական ռազմանաւեր չը կան։ Ռուսաստանը ռազմանաւեր չէ ուղարկում, բայց հաւանութիւն է տալիս մեծ պետութիւնների հաւաքական քայլին, համոզված լինելով որ այդ համապատասխան է բալկանեան դաշնակիցների շահերին։

Պաշտօնապէս ոչ Չեռնոգորիան, ոչ էլ Սերբիան չեն պատասխանել մեծ պետութիւնների վերջին դիմումին Սկիւտարի և Ալբանիայի առիթով, սակայն երկու տէրութիւններն էլ ոչ պաշտօնապէս հաղորդել են, թէ պէտք է քննեն այդ հարցը դաշնակիցների հետ։ Միևնոյն ժամանակ, Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, Սերբիան գործադրում է իր ազդեցութիւնը Չեռնոգորիայի վրա, որպէսզի համոզէ վերջինիս չը կորցնել մեծ պետութիւնների համակրութիւնը։ Սերբիան նոյնպէս տեղեկացրել է մեծ պետութիւններին, թէ նա պարտաւոր է աջակցել իր դաշնակից Չեռնոգորիային։

Ծանօթ.—Պետ. Հեռ. Գործակալութիւնը լիազօրված է յայտնելու, որ Ռուսաստանի դէպի ծովային ցոյցը ունեցած վերաբերմունքի մասին հեռագրում բերված բացատրութիւնները սխալ են։

Փարիզ.—Հաւասը յայտնում է, որ այն տեղեկութիւնը թէ իբր Ֆրանսիան կը մասնակցէ ծովային ցոյցին ընդդէմ Չեռնոգորիայի, ճիշդ չէ։ Հաւասի տեղեկութիւնների համաձայն, Անգլիան Ֆրանսիայի հետ լիակատար համաձայնութեամբ նոյնպէս ձեռնպահ կը մնայ ցոյցին մասնակցելուց, սակայն Ֆրանսիան մի յածանաւ է ուղարկում Կորֆու՝ Անգլիայի հետ շփումն պահպանելու համար, որը նոյնպէս Կորֆու է ուղարկել երկու ռազմանաւ։

Վիեննա.— Միջազգային ծովային ցոյցին մասնակցելու նպատակով հրաման տրվեց անյապաղ չեռնոգորական ջրերը ուղարկել աւստրո-ունգարական ռազմանաւերը։

Ամբողջ մամուլը կատաղի յարձակում է սկսել Չեռնոգորիայի դէմ։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» տպել է առայժմ անհաստատ տեղեկութիւն, թէ աւստրիական ռազմի նաւատորմը գըտնվում է Անտիվարիի ճանապարհին։ «Բէյխս-Պօստը» ծովային ցոյցը համարում է թոյլ միջոց և յարձակվում է Ռուսաստանի վրա, թէ իբր դրդում է Չեռնոգորիային դիմադրելու։ Լրագիրը յարձակվում է նաև Յունաստանի վրա, որ յայտարարում է, թէ նա չի վերադարձնի իր՝ Ալբանիայի այն մասերը, որ ինքը նուաճել է։ Այդ անհանկալ դժուարութիւնը, լրագրի կարծիքով, նոյնպէս արդասիք է Ռուսաստանի վարմունքի։ «Նէյէս-Վինէր-Տա[illegible] մարում է համսլաւօնական ագիտացիան և Չեռնոգորիայի գործողութիւններն անուանում է ծաղր Եւրոպայի դէմ։ Փոքր օրաթերթերը չափազանց անքաղաքավարի ոճ են գործադրում Չեռնոգորիայի և Նիկօլայ թագաւորի մասին։

«Վինէր Ալգ-Ցայտը,» հաղորդում է պաշտօնական աղբիւրից, որ ծով են մտել երեք զրահանաւ և մի քանի փոքր ռազմանաւեր՝ Չեռնոգորիայի դէմ կայանալիք ցոյցին մասնակցելու համար։

ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԻ ԱՌՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 մարտի

Ադրիանուպօլիս. — Ադրիանուպօլսի ռմբակոծութեան ժամանակ ռումբերից փչացվեցին ռուսաց հիւպատոսարանի երկու շինութիւնները։ Հիւպատոսարանի մարդիկ անվնաս են։ Ընդհանուրի հիացմունքն է առաջ բերում պաշտպանման միջոցին փոխ-հիւպատոս Կլիմէնկօյի վարմունքը, որ կրեց ամեն զրկանք ու վտանգ։ Շնորհիւ փոխ-հիւպատոսի խելացի կարգադրութեան, ռուսաց գաղութը և Ադրիանուպօլսի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որ գտնվում էր ռուսաց հիւպատոսարանի հովանաւորութեան տակ, դիմացան պաշարումին, չը տուժելով քաղցից։ Փոխ-հիւպատոսը ազգաբնակութեանը բաժանում է դրամ ու մթերք։

Սօֆիա.—«Միր» հերքում է արտասահմանեան լրագիրների այն տեղեկութիւնը, թէ Շիւքրի-փաշան փորձել է անձնատուր լինել սերբերին Ադրիանուպօլսի հիւսիս-արեւմտեան կողմում։ Իրողութիւնը այն է, որ Շիւքրի-փաշան բռնվեց բուլգարներից այն րոպէին, երբ ոչնչացնում էր իր արխիվը։

(Լրագիրներից)

Ադրիանուպօլսի գերիների թըւումն են 14 փաշաներ։ Բուլգարների ձեռք ձգած աւարը գնահատվում է 150 միլիոն ֆրանկ, և հաւասարապէս բաժանվելու է սերբերի և բուլգարների մէջ։

Ադրիանուպօլսի վերջնական առմանը նպաստեցին սերբիական 60,000 զինւոր, և յաղթութեան դափնու կէսը, դիւանագէտների կարծիքով, բաժին է ընկնում և սերբերին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔ

Կարս, 19 մարտի

Գաղթականութեան մի նոր հոսանք է սկսվում Թիւրքահայաստանից։ Մի մասնաւոր գործով Սարիղամիշ էի գնացել և այնտեղ տեսայ նոր գաղթած մի խումբ հայ գիւղացիներ։ Նրանք պատմեցին ինձ, որ ճանապարհ են ընկել շատ ընտանիքներ, որոնք Կաղզւանի և Սարիղամիշի վրայով դէպի Ռուսաստան են դիմում։ Կաղզւանից եկողներն էլ պատմում են նման գաղթականութեան մասին։ Այստեղ դեռ խիստ ձմեռ է, բայց այդ արգելք չէ գաղթողներին։ Նրանց մի մասը նախազգալով, որ գարնան բացվելուն պէս սկսվելու են հին զուլումները, աւեր ու թալան, խոհեմութիւն են համարել օր առաջ իրանց՝ ռուսական հողը ձգել, իսկ միւս մասը, չը ցանկանալով գլուխները տալ և հեռաւոր Ջաթալջայում սպանվել, նեղվելով օսմանցիների բռնութիւններից և տուգանքների խստութիւնից, ծախել են ամէն ունեցածը և եկել սահմանը անցել։ Ի՞նչ կը լինի այս գաղթականութեան վերջը։ Մինչև երբ Թիւրքահայաստանը դատարկվի։ Ի՞նչպիսի ընդունելութիւն են գտնելու այս նոր գաղթականները։ Սրանք մտածելու հարցեր են։

Գ. Տ.-Ռ.

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

I

Վան, 4 մարտի

Նախորդ թղթակցութեամբս ծանուցել էի արդէն «Бирж. Вѣд.» լրագրի թղթակից Օլգէնինի ժամանումը քաղաքումս. 15 օրից անց է, ինչ նա Վանումն է ու մտադիր է շուտով ուղևորվել Բիթլիս և ապա Հայաստանի միւս քաղաքները։

Նրա նպատակն է, ինչպէս յայտնի է, ուսումնասիրել հայկական հարցը. այս նպատակով զանազան շրջանների հետ յարաբերութեան մտաւ ու տեղեկութիւններ քաղեց հայոց հողային հարցի, հարստահարութիւնների և ուրիշ խնդիրների մասին։ Քաղաքիս այլևայլ մտաւորական ու խմբակցական շրջաններում բանկէտներ տրվեցին ի պատիւ նրան։ Թղթակիցը ընդհանրապէս այն կարծիքն էր յայտնում, թէ Ռուսաստանի ժողովուրդը անծանօթ է հայոց խնդրին, սրանց ցաւերին ու մինչև իսկ գոյութեան, ուստի այս պատճառով էլ նոյն իսկ հասարակական կարծիք գոյութիւն չի կարող ունենալ յօգուտ հայկական հարցի։

«Ձեր կովկասահայ եղբայրները,—ասում է»—չը նայած որ նրանց մէջ համալսարանական կրթութիւն ստացողներ բազմաթիւ են, հոգ չեն տարել Ռուսաստանի մայրաքաղաքներից կամ գլխաւոր քաղաքներից մէկում ունենալ մի օրգան, որ ռուս ժողովրդին ծանօթացնէր հայ ժողովուրդը և նրա հարցն ու հասարակական հոսանք առաջ բերէր ի նպաստ հայկական հարցին։ Կառավարութիւնները,—ասում է,—մղվում են հասարակական կարծիքից պատերազմի և այլ դէպքերում։ Եթէ այժմ կամ տարիների ընթացքում ռուս ժողովուրդը այնպէս լաւ տրամադրված է ի նպաստ բալկանեան հարցին, պատճառն այն է, որ նա ծանօթացել է բալկանցիների տառապանքներին. և եթէ ռուս կառավարութիւնը ընդդէմ իսկ լինէր բալկանեան հարցին, այնու ամենայնիւ պարտաւորված էր լինելու միջամտել, թէկուզ նոյնիսկ պատերազմով, մղված՝ հասարակական կարծիքից։ Այլապէս՝ այն կառավարութիւնը, որ չի ներկայացնում ժողովրդի հարազատ ձայնը, նա տապալվում է, և պաշտօնի է անցնում այնպիսի կառավարութիւն, որ աւելի շանս ունի ժողովրդի ձայնի ու նրա բաղձանքների հարազատ թարգմանն ու գործադրողը լինելու»։

Մտրակ

II

Իսպիրից (Երզրումի վիլայէթում) ուղարկված մի ծանօթ նամակից քաղում ենք հետևեալ հատուածը.

«Շատ նեղ վիճակի մէջ ենք. դրութիւններս անտանելի է. այսպէս ապրելուց մեռնելը լաւ է. բայց ինչ անենք, մահն էլ խռովել է մեզանից, շուտ չի գալիս. երևի նա էլ է ուզում, որ թիւրք կառավարութիւնը մեզ աւելի ծանր տանջանքների ենթարկէ։

«Ինչպէս անցեալ նամակովս գրած էի, մի երկու անգամ կառավարութիւնից եկան «էհանա» (բռնի հանգանակութիւն) հաւաքելու պատերազմի ծախսերը հոգալու համար։ Ինչքան որ կարողութիւններս հասաւ, տուինք։ Եւ ահա չէ անցել 2 շաբաթ, նորից եկած են. բայց այս անգամ քիչ բանով չեն գոհանում. ամէն մէկից պահանջում են 5—20 ոսկի, այնպիսի մի գումար, որը մեր ոյժից շատ վեր է։ Իսկ եթէ չը վճարվի յիշեալ պահանջված գումարը, իսկոյն ժանդարմ են ուղարկում տանից, տանում են քաղաք (կասաբա), մի պուգանոց դաղի թէնէքէ՝ պարապ՝ կախում են վզից և շուկայում ման են ածում, մի մարդ էլ ետևից գնալով՝ բարձր ձայնով կանչում է՝ «փադիշահ խըյանէթի» (թագաւորի հակառակ)»։

Եւ այսպէս ուրիշ մի շարք խայտառակութիւններ, որ ամբողջովին արձանագրելու փոխարէն՝ խոր հոգոցով է վերջացրել նամակագիրն իր գրութիւնը։

ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ՈՒ ԽՈՀԵՐ

Համաշխարհային սպանդանոցը

Պատմական կուլտուրական ինքնագիտակցութեան օրերից մարդիկ գոչում են անթիւ պատերազմների, արհաւիրքների ու բռնութեան ամբարշտութեան չիկացած հնոցից՝ «Կորչի՛ պատերազմը, խորտակվի՛ն զէնքերը…»։

Բայց՝ հնում տակաւ, ներկայիս բազմանդամ խաղաղասէրների բանակի կոչը մնում է անարձագանք՝ արեան ու աւերի փլատակների, ծովի մէջ։

Դարերից ի վեր լսվում է այդ հառաչը, աղերսը, և մինչև այսօր տակաւին առասպելական վիշապի նման գազանական, աւերատու մարդը սրում է իր ժանիքները, քաղաքակրթութեան վսեմ գնդանին կռում ու կոփում նորանոր զէնքեր խօլական թափով և՝ որպէս անվերջ վրէժառութեան վեհ ոգի՝ ենում կործանարար պայքարի դաշտը, համաշխարհային սպանդը։ Դեռ ես առաջին խաղաղասէրը՝ Եսայի մարգարէն՝ անիծում էր պարիսպներն, աշտարակներն ու ամրոցները, նզովում բոլորը, որ պահպանում է պատերազմի կուռքի գոյութիւնը, անգոսնում՝ սուսեր, նախանձ ու բռնութիւնը, օրհնաբանելով գալիք դարերը, երբ [illegible] ու մանգաղ կը պատրաստեն… Քրիստոնէական եկեղեցին այսօր էլ իր բեմերից աղօթքներ է առաքում առ Աստուած՝ աշխարհային խաղաղութեան մասին, խաղաղասէրները միտինգներ են կազմակերպում, ծրագիրներ մշակում… Եւ դարձեալ, որպէս մղձաւանջային մի ճիւաղ, սաւառնում է պատերազմի ոգին, տապալում, ոչնչացնում կուլտուրայի արգասիքները, քայքայում, գազանացնում, արժանազուրկ դարձնում մարդկութիւնը։

Նրա կրկէսից դեռ այսօր էլ լսվում են թնդանօթների որոտները, հոսում արիւնը, աւերվում բոլորը, որ երկնել են խոհուն միտքն ու ջլուտ բազուկները դարերով։

Զօրքերի թիւը տարէ-տարի աւելանում է, աճում, բազմանում մարդու արիւնով լուացվող ձեռքերը։

Դիմենք, սակայն, սարսափելի փաստերին։

Ռուսաստանում խաղաղ ժամանակ զօրքերի թիւը հասնում է 1 միլիոնի։ Իւրաքանչիւր տարի զինուորագրութեան են հրաւիրվում 300 հազար մարդ։ Մօբիլիզացիայի դէպքում Ռուսաստանը կարող է պատրաստել 2½ միլիոն զօրք, իսկ ընդհանուր առմամբ (պահեստիներով և այլն) 1 միլիոն։

Մշտական զօրք ունեն. Ֆրանսիան՝ 589 հազար, Գերմանիան՝ 585 հազար, Աւստրօ-Ունգարիան՝ 365 հազար, Անգլիան՝ 220 հազար, Իտալիան՝ 174 հազար։

Ներկայիս Եւրոպայում զէնքի տակ են 4,250,000 մարդ։

[illegible] պատրաստութեան համար ծախսվում են ահռելի գումարներ՝ ժողովրդական կոպէկներից։

Ռուսաստանը	ծախսում է	տարեկան	285 միլ.
Գերմանիան	»	»	250 միլ.
Ֆրանսիան	»	»	240 միլ.
Աւստրիան	ծախսում է	տարեկան	160 միլ.
Անգլիան	»	»	165 միլ.
Իտալիան	»	»	100 միլ.
Իսկ բոլորը	»		1 միլիարդ 200 միլ.

Մէկ միլիարդ երկու հարիւր միլիօն… Եւ յիշեցէք, թէ որքան զոհեր են տանում քաղցն ու հիւանդութիւնները…

Հաշուած է, որ 100 տարում Եւրոպան, տարփողիչ, քաղաքակիրթ Եւրոպան՝ պատերազմի կուռքին զոհաբերում է 20 միլիօն մարդ։ Նիւթական վնասներն անհաշուելի են…

Պատերազմի Աստուծու ամենաջերմեռանդ հաւատացեալն է Թիւրքիան։ Դա ամենակատաղի և ամբարիշտ պետութիւնն է Եւրոպայում։ XIX դարում խաղաղութիւն են վարել և պատերազմներով զբաղվել՝

Պետութիւններ	Պատերազմ		Խաղաղութիւն	
Թիւրքիան	41	տարի	59	տարի
Սպանիան	31	»	69	»
Ֆրանսիան	27	»	73	»
Ռուսաստանը	24	»	72	»
Իտալիան	23	»	77	»
Անգլիան	21	»	79	»
Աւստրօ-Ունգարիան	17	»	83	»
Նիդերլանդիան	14	»	86	»
Գերմանիան	13	»	87	»
Պօրտուգալիան	12	»	88	»
Շվեդիան	10	»	90	»
Դանիան	9	»	91	»

Եւրոպայում լիակատար խաղաղութիւն է եղել՝ 1816—1818, 1841—1847, 1879—1881, 1886—1896 թւերին։ XIX դարի պատերազմներից ամենաարիւնահեղը արևելեան (Ղրիմի) պատերազմն էր 1853—1856 թ.թ.։ Դաշնակից Թիւրքիան, Անգլիան և Ֆրանսիան կորցրին 70,000 մարդ, Ռուսաստանը՝ 128,700։ Եթէ հաշւենք և հիւանդութիւններից կոտորվածներին, սպանվել են ահաւելի Թիւր. դաշնակիցներից՝ 252,000, ռուսներից՝ 256,000 մարդ։ Ընդամենը՝ 508,000 մարդ։ Երկուստեք գործածվեց 4½ միլ. պուդ վառօդ, 16½ միլ. գնդակ։ Մի օրվայ ընթացքում այդ դարի նշանաւոր ճակատամարտում ընկան 23,000 մարդ։

Պատերազմի միջոցին մեծ աւերածութիւններ են կատարում և հիւանդութիւնները։ 1812 թւի յունիսի 24-ին Նապոլէօնը անցաւ Նէման գետից 363 հազար մարդով, որոնցից յետ վերադարձան 8000 մարդ։ Կային ժամանակներ 15 մարդկանցից 1-ը սպանվում է, 4-ից 1-ը վիրաւորվում, 9-ից 1-ը հիւանդանում։ Համարեա բոլոր պատերազմներից համատարած սով ու սնանկութիւն է առաջ եկել։ Ֆրիդրիխ Պասսին ճիշդ է նկատում. «Գումարենք պատերազմի փաստերի հետևանքները՝ կը ստացվի լոկ սնանկութիւն»։ Սնանկութիւն, բա- [illegible] կութիւն։

Մարդկութեան կեանքի անիւը գլորվում և գլորվում է նորանոր յաղթութիւններով կուլտուրական ասպարէզում, և, սակայն, դարաւոր մղձաւանջը հեղձում է ամենը։ Մարդկութիւնը, հզօր համարված, բայց իրօք թզուկ մարդկութիւնը կապկային աւանդական տենդենցներով շարունակում է իր արիւնով ու արցունքով հրանիւթ մատակարարել համաշխարհային սպանդանոցի հառուն գեհեննին…

Ա. Կոծինեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս գիտենք, Ցովնանեան դպրոցի վերջին երեք տարիների հոգաբարձութիւնը—որի անդամներն էին պ. պ. Հ. Առաքելեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, Մովսէս Մէլիքեան և Ս. Մելքումեան—այս մարտի 1-ին յանձնեց դպրոցը նոր հոգաբարձութեան և հեռացաւ։

Այդ առիթով թող ներվի մեզ մի համառօտ ակնարկ ձգել իր պաշտօնավարութիւնը լրացրած հոգաբարձութեան եռամեայ գործունէութեան վրայ։

Մենք առաջ կը բերենք միայն փաստեր և թւանշաններ, իսկ եզրակացութիւնը կը թողնենք անել ընթերցողներին։

1) Մտնելով պաշտօնի մէջ 1909 թ. դեկտեմբերի 1-ին, այդ հոգաբարձութիւնը ստացաւ իր նախորդ հոգաբարձութիւնից 90,000 րուբլի դրամագլուխ և քարվանսարան, որ բերում էր տարեկան 21,200 ր. եկամուտ։ Թէև բացի այդ 90,000 ր. գումարից դպրոցը ունեցել էր և 25,000 ր. պահեստի գումար, բայց այդ գումարով 1906—1909 թ. հոգաբարձութիւնը ծածկել էր իր տարեկան դեֆիցիտները։

2) Պաշտօնավարելով երեք տարի, 1909 թ. դեկտ. 1-ից մինչև 1913 թ. մարտի 1-ը, հոգաբարձութիւնը կարողացաւ դպրոցի անտեսական մասը այնպէս վարել, որ ոչ միայն չունեցաւ դեֆիցիտ, այլ ներկայ 1912—13 ուս. տարվայ նախահաշիւը կազմեց 1200 ր. յաւելուածով։

3) Բացի դրանից՝ նա յանձնեց նոր հոգաբարձութեան ա) 96,100 ր. դրամագլուխ, որ բերում է տարեկան տոկոսիք 4560 ր., փոխանակ 90,000-ի, որ բերում էր տոկոսիք 3420 ր., բ) քարվանսարան՝ 27,816 ր. տարեկան եկամուտով, մինչ առաջ բերում էր միայն 21,200 ր. եկամուտ։

Հետևաբար, Ցովնանեան դպրոցի եկամուտները 3 տարվայ ընթացքում հոգաբարձութիւնը աւելացրել է 6616+1140=7756 րուբլով, քան էր առաջ։

4) Նա կատարել է հետևեալ բարեփոխութիւններն ու նորոգութիւնները. ա) բացել է մի ճաշարան, ուր ամեն օր մօտ 50—60 ամենաչքաւոր աշակերտուհիներ ստանում են նախաճաշ, բ) հիմնել է ուսուցիչների և ծառայողների ապահովութեան համար թօշակարկղ, որպիսին գոյութիւն ունի և Ներսիսեան դպրոցում, և յատկացրել է իր միջոցներից յօգուտ այդ թօշակարկղի ֆոնդի տարեկան 1200 րուբլի. գ) հիմնել է թօշակարկղին կից փոխատու դրամարկղ ուսուցիչների համար. դ) անց է կացրել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

V*)

Մեր մարմնակազմի զանազան գործողութիւններն իրանց անհամար և բարդ փոփոխութիւններով որոշ ազդեցութեան տակ են գնում ժառանգականութիւնը։ Սրանց մէջ ամենանշանաւոր դերը, հարկաւ, պատկանում է սննդառութեանը, որովհետև սա մեր բոլոր գործողութիւնների մէջ ամենաէականն է և ընդհանուրը բոլոր արարածների համար։

Գիտութեան մէջ յայտնի է և որոշակի ճշտով արձանագրված այն դերը, որ ժառանգական փոփոխութիւններն ունեն յօդազարութեան (արթրիտիզմ) և խուլազարութեան, խուլախտի (սկրոֆիւլօզ) զարգացման գործում։

Յայտնի է նմանապէս շատ մեծաթիւ արձանագրված փաստերով, որ ծնողների շատ թեթև անգամ արտայայտված արատը կարող է մեծանալ և սպառնացող դառնալ, երբ նա յետագայ սերունդների մէջ ամփոփվի։

Երբ այս երևոյթը մանաւորապէս յօդազարութեանը վերագրելու լինենք, նա մի զարմանալի, շատ անգամ և անհաւատալի բնոյթ կը ստանայ. և սակայն դրա բացատրութիւնը բաւական հեշտ է և դիւրըմբռնելի։

Վերցնենք այսպիսի մի դէպք։ Յօդազարութիւնը երևան է եկել արտաքին պատճառներից. այսինքն երբ մարդ ինքն է ձեռք բերել այս հիւանդութիւնը, երբ ժառանգականութիւնը չէ փոխադրել այն։ Այսպիսի մարմնակազմի մէջ [illegible] փոփոխութիւններ տեղի պիտի ունենան։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ յօդազարութիւն երևան բերող այդ արտաքին պատճառները պէտք է իրանց մնասաբեր և հիւանդոտ ազդեցութիւնը գործեն արդէն հասունացած խորշիկների վրա, որոնց գործունէութիւնը վաղուց արդէն իր որոշ և սահմանված ընթացքի մէջ է մտել. ապա ուրեմն և այդ արտաքին պատճառները պէտք է փոփոխեն կայուն և տարիներից հաստատված անփոփոխ մի դրութիւն։

Իսկ ժառանգականութեան միջոցով փոխադրված հիւանդոտ խանգարումները արդեօք նոյն յիշածս տեսակին են։

Ի հարկէ ո՛չ։

Ինչու։

Պարզ բան է, որ այս վերջին դէպքում, երբ ժառանգականութիւնն է հանդէս գալիս մարդուս առողջութիւնը քայքայելու համար—իսկ մանաւորապէս նա պիտի յօդազարութիւնը հօրից որդուն փոխադրէ—վնասակար ազդեցութիւնը պէտք է գործադրվի մատղաշ խորշիկների վրա, որոնք դեռ ևս զուրկ են որևէ անդրական ուղղութիւնից և որոնք պատրաստ են տպաւորվելու այն ամեն ազդեցութիւնից, որ նրանք կը ստանան։

Այստեղ, ժառանգականութեան պատմութեան հարցումը ճիշդ կատարվում է այն, ինչ որ հէնց հիմունք է ներկայանում երեխաների դաստիարակութեան հարցում և գործում։ Այս երկու դէպքումն էլ մատղաշ խորշիկները շատ հեշտութեամբ հպատակվում են այն ազդեցութիւններին, որոնց դէմ նրանք գուցէ և կըմբոստանան, երբ կը հասունանան։

Եթէ մենք մեր քննութեան առարկայ դարձնենք յօդազարների մի ընտանիք, ապա կը տեսնենք, որ նրա մի քանի անդամները ներկայացնում են այնպիսի հիւանդոտ երևոյթներ, որոնք կարող են և կերպարանափոխվել, և ո՛չ։

Յօդազարութիւնն իր սովորական արտայայտութիւնների լէգէօնների շարքումն ունի՝ յօդակաթուածը (գուտա), մորթախտը (էգզէմա), ջղային զանազան հիւանդութիւններ՝ սկսած հասարակ ջղացաւից (նեվրալգիա) և անգարից (միգրէն) մինչև տխրութիւնը, սևամաղձութիւնն (հիպօխոնդրիա) և ջղաթուլութիւնը (նեվրասթէնիա), շաքարախտը (դիաբետ), աւազախտը, մաղձաքարը և սրանց նման շատ հիւանդութիւններ։

Եւ տեսէք, որ այս բազմատեսակ հիւանդութիւնները կարող են միևնոյն հիւանդի մարմնի մէջ միաժամանակ գոյութիւն ունենալ, սակայն աւելի յաճախ նրանք իրար յաջորդում են հիւանդի, կամ նրա սերունդների մէջ։ Օրինակ՝ մի յօդակաթ հօրից ծնունդ է առնում և աշխարհ գալիս շնչարգելութիւն ունեցող մի որդի։ Այլ դէպքում մենք կը տեսնենք, որ մի յօդազար հօրից ծնված որդին իր պատանեկական հասակում կը նեղվի, կը տանջվի դեղխացաւից, անգարից, իր 15 տարեկան հասակից արդէն կը սկսէ ընկնել շնչարգելութեան հարուածների տակ, 30—35 տարեկան հասակում նա կը ստանայ յօդակաթուած, իսկ աւելի ուշ նա զոհ կը գնա ուղեղի կաթուածին։

Անգութ և դաժան ժառանգականութեան ժրաջան գործունէութեան արդիւնք և հետևանք…

Տեղն է յիշելու, որ ժառանգականութիւնը նմանական է անուանվում, երբ երեխան ճշդիւ իր ծնողի հիւանդութիւններն է իր մէջ պարունակում. օրինակ՝ երբ երկուսն էլ ունեն շնչարգելութիւն կամ յօդակաթուած։

Ժառանգականութիւնն անուանվում է աննման, երբ երկու սերունդի մէջ արտայայտված հիւանդութիւնները տարբեր են։

Յօդազարութիւնը քաղաքակիրթ ազգերի և հասարակութեան բարձր շրջանների բաժինն ու սեփականութիւնն է։ Գերազանց խելքի տէր անհատների շատ շատերը նրա զոհերի շարքումն են գտնվում և տանջվում են նրա ճիրաններում։ Հանճարաւոր մարդկանց բնաւորութիւնը յաճախ տխուր, տարօրինակ և թերի է լինում, որովհետև ուղեղի կարողութիւնները կամ ընդունակութիւնները միահաւասար կերպով չեն զարգացել, ուղեղի մէջ մնացել են թերի տեղեր, կամ խանգարումներ, որոնք երբեմն տանում հասցնում են մինչև իսկական խելագարութեան։

Անհերքելի է, հարկաւ, որ ժառանգականութիւնը կարող է շարունակել բարձր և գերազանց յատկութիւնների զարգացումը, բայց և շատ յաճախ ժառանգականութեան շնորհիւն է անսասան կատարվում ուղեղի խանգարումների գերակայութիւնը, գերիշխանութիւնը և առաջ գալիս մտաւոր այլասերման կամ նոյնիսկ խելագարութեան զարգացումը։

Սրա մասին կը խօսեմ, երբ հերթը գայ ջղային ժառանգականութեան։

⁂

Երկրորդ տեսակութիւնը, ցաւագարութիւնը, խուլախտը, նկատվում է այն երեխաների վրա, որոնց ծնողներն առհասարակ վատառողջ են։ Կամ թէ կրում են իրանց մէջ մի որևէ երկարատև թունաւորումն, կամ վարակումն. օրինակ՝ ոգեմոլութիւն, սիֆիլիս և մանաւանդ տուբերկուլօզ։

Այսպիսիների սերունդները իրանց մանուկ հասակում լինում են հիւանդոտ, թուլակազմ և խեղճ ու կրակ, լպիրծ և փալասանման մկանունքներով, երկար և մետաքսանման թերթերունքով, ուռած նշագեղձով, տափակ քթով. այսպիսիները իրանց կեանքի հէնց առաջին, մատղաշ շրջանում ենթակայ են լինում մորթային տեղերի, զանազան օտարոտի բորբոքումներին, որոնց հետևանք է լինում խուլեր, գեղձերի ահագին ուռուցքներ։

Եթէ այսպիսի երեխաներ վաղաժամ մահի ճիրաններից ազատվելու լինեն, նրանք այնուհետև իրանց պատանեկական հասակում զոհ պիտի դառնան ոսկորների կամ յօդերի տուբերկուլօզին, որը ժամանակի ընթացքում անշուշտ տարածվելով մարմնակազմի և միւս մասերի մէջ՝ ժառանգականութեան այդ խղճուկ ու քնքոյշ զոհերին ժամ առաջ յաւիտենականութեան ծոցը կը դնէ։

Ահա թէ ինչպէս կանհետանայ այլասերվածների այս տեսակ ցեղը։

Ահա թէ ինչ զոհերով բաւարարութիւն պիտի ստանան բնական ընտրութեան գերագոյն, անողոք, բայց և անկաշառ ու անաչառ օրէնքները։

Բժ. Արտաշէս Շիհեան

ԱՆՀԱՏԻ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ*)

II

Եթէ Ֆրանսիան մի շարք փայլուն յաղթութիւններով պսակեց իր յախուռն շարժումը, դրա պատճառը պէտք է որոնել միմիայն հասարակական պայմանների և ոչ Նապոլէօնի կամ մի այլ հերոսի անհատական կամքի ու եռանդի մէջ։ Նախ որ՝ յեղափոխականացած «Երրորդ դասակարգը» իր ներքին կռւի մէջ այնքան զոհեր տալուց և իր գերակշռութիւնը արեան առակալի լճակների գնով ձեռք բերելուց յետոյ՝ այլևս չէր կարող կանգ առնել իր ներքին անկախութիւնը արտաքին թշնամիներից պաշտպանելու գործում։ Ո՞վ էր պատմական այդ շարժման մէջ Նապոլէօն Բօնապարտը, եթէ ոչ այդ նոր դասակարգի հասարակական իղձերի միջին արտայայտիչներից մէկը։ Ի՞նչ աջողութիւն կարող էին ունենալ Ֆրանսիայի յեղափոխական պատերազմները, եթէ Հին Եւրոպայում, գլխաւորապէս Ֆրանսիայի սահմանակից պետութիւնների միջև նոյն «Երրորդ դասակարգը» դժգոհ չէր լինէր իր հասարակական վիճակից։

Նոյնիսկ այդ հարևան ազգերի մէջ մասամբ սկսվել էր յեղափոխական շարժում (Բելգիայում և Վենետիկում), որ աւելի ևս մեծ գրաւական էր ֆրանսիական «ազատաբար» զօրքերի յաղթութեան համար։ Իսկ եթէ Ֆրանսիայի դէմ զինված պետութիւնների կօալիցիան շարունակ հանդիպում էր անաջողութիւնների, դրա պատճառներից մէկը, բացի ներքին հրամայական պայմաններից, դաշնակիցների փոխադարձ թշնամութիւնն էր, որովհետև նրանցից իւրաքանչիւրը իր առանձին շահերն էր ուզում պաշտպանել ընդհանուր կռւի ժամանակ։

Աւստրիան, Պրուսիան և Ռուսաստանը չէին կարող ամբողջովին կենտրոնանալ ֆրանսիական պատերազմների վրա, որովհետև նրանք միանգամայն կլանված էին Լեհաստանի բաժանման խնդրով։

Ահա այս ներքին և արտաքին պայմաններն էին, որոնք Ֆրանսիային խոշոր յաղթանակներ շնորհեցին, իսկ նրանց տաղանդաւոր գործիչներին՝ դափնեայ պսակներ։ Եւ այս աւելի քան նպաստաւոր պայմաններում հանդէս եկաւ Նապոլէօնը և, իբրև Ֆրանսիայի զօրաբանակի և «Երրորդ դասակարգի» տրամադրութեան ու ձգտումների իսկական արտայայտիչը, իր անուան հետ կապեց պատմական այդ տենդոտ շրջանը։

Բայց Նապոլէօնը միակ չէր նոյնիսկ իբրև արտայայտիչ։ Երրորդ դասակարգը, յեղափոխականացած ֆրանսիական ժողովուրդը իր շարժման յախուռն թափով հրապարակ էր հանել բազմաթիւ ընդունակ, տաղանդաւոր գործիչներ, նշանաւոր զօրավարներ, որոնք մինչև Նապոլէօնի հռչակ առնելը՝ փայլուն յաղթանակներ էին տարել, ամբողջ երկիրներ էին նուաճել, ինչպէս օրինակ Բելգիան, Հռենոսի ձախ ափը, Սավօյեան, Նիցցան և ապա մանաւանդ Հօլլանդիան։ Եւ եթէ նախորդ պայմանների վրա աւելացնենք այս ուրիշ հանգամանքներից մէկը, ապա ուրեմն պարզ կը լինի, թէ յաղթութիւններով ոգևորված, ամեն տեղ՝ ճնշված ժողովրդի կողմից՝ լաւ ընդունելութիւն գտնող ֆրանսիական յեղափոխական զօրքը ո՞րպիսի եռանդով պիտի գործէր Նապոլէօնի՝ մի տաղանդաւոր զօրավարի հետ։ Ճնշված ազգերը նոյնիսկ իրանք էին դիմում ֆրանսիացիներին՝ գալ և ազատել իրանց այս կամ այն լուծից։

---

*) Տես «Մշակ» № 50.

*) Տես «Մշակ» № 61.

դպրոցում և քարվանսարայում էլեքտրական լուսաւորութիւն. ե) ճոխացրել է ֆիզիկական կաբինէտը և մատենադարանը. զ) նորոգել է դպրոցը—յատակները, պատերը, վառարանները և այլն. է) կազմել է ուսման ծրագիր, որից զուրկ էր դպրոցը, և առաջարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսի քննութեան. ը) աւելացրել է ուսուցիչների դասագինը. թ) մատակարարել է աշակերտուհիներին ձրի բժշկական օգնութիւն և դեղօրայք. ժ) ծախքերի մէջ կատարած կրճատումներից պէտք է յիշել այն, որ քարվանսարայի կառավարչի ստացած 1200 րուբլի ռոճիկը չափազանց գտնելով (քարվանսարայի խանութները տրվում են պայմանագրերով, այնպէս որ նոյնիսկ առանձին կառավարչի հարկ չը կայ), կրճատել է և նշանակել 600 րուբլի, որպիսի գումարը շատ բաւական վարձատրութիւն է այդպիսի մի պաշտօնի համար:

Հոգաբարձութիւնը մտադիր էր ունեցած 96,100 ր. դրամագլխով գնել Թիֆլիսում լաւ եկամուտ բերող մի անշարժ կալուած, քարվանսարայի նման, բայց ժամանակ չունեցաւ իրագործել իր ծրագիրը և թողեց այն իր յաջորդին: Եթէ գնվի մի լաւ կալուած, 4560 ր. տոկոսիքի փոխարէն գուցէ կարելի լինի ստանալ տարեկան 7—8000 րուբլի և այդպիսով ընդմիշտ ապահովել դպրոցը:

Այս համառօտ ակնարկից ակնյայտ է, որ եթէ նոր հոգաբարձութիւնը նոյնիսկ նոր յաւելումներ չը կարողանայ անել, բայց եթէ պահէ դպրոցը յարատև այն վիճակի մէջ, որ ստացել է, դա եւս մեծ գործ կը լինի: Բայց յուսանք, որ նա ինքն եւս նոր յաւելումներ կանէ և կը յանձնէ դպրոցը իր յաջորդին աւելի եւս բարգաւաճ դրութեան մէջ:

Այստեղ հարկ եմ տեսնում յիշել և այն, որ հոգաբարձութիւնը, բացի վերոյիշեալ 4 ընտրեալներից, ունեցել է և 3 անդամներ ի պաշտօնէ—Թեմակալ առաջնորդը, Կուսանաց վանքի մայրապետը և Անանեան տոհմի աւագ ներկայացուցիչը: Հոգաբարձութեան նախագահ եղել են հանգուցեալ Գարեգին արքեպիսկոպոսը և ապա Եփրեմ եպիսկոպոսը, իսկ փոխ-նախագահներ՝ Ս. Մելքումեան և Հ. Առաքելեան: Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Թեմ. տեսչի այցը

Լագօդաղ, 15 մարտի

Ամսիս 13-ին Զաքաթալայից տեղս եկաւ Վրաստանի և Իմերէթի թեմի հայոց եկ.-ծխ. դպրոցների թեմ. տեսուչ Ց. Տէր-Միրաքեանը: Նոյն օրը հոգաբարձուների ներկայութեամբ քննելով տեղիս դպրոցի երկսեռ աշակերտութիւնը՝ նա իր գոհունակութիւնն ու դիտողութիւնները յայտնեց ուսուցչ. կազմին և երեկոյեան ուղեւորվեց դէպի Վելիսցիխէ ու այնտեղից Թէլաւ:

Վերջերս շանտաժիստների մի խումբ է լոյս ընկել այստեղ, որ սպառնական նամակներ է գրել և փող պահանջել Ն. Եաւրեանից 500 ր. և Մղ. Պապովեանից 100 ր.: Ոստիկանութիւնը խիստ հետեւում է այդ բանին: Հաւանական է շուտով բռնվեն:

Փիրուզ

Կեանքը Շուշում

Շուշի, 15 մարտի

Մեզանում գարուն է: Երկրի մակերեւոյթը քօղարկող սպիտակ սաւանը աննկատելի կերպով, կարծես մի վայրկեանում, հրապուրիչ կանաչազարդ գորգերի փոխվեց:

Գարնան գալու հետ մեր առոյգ և զըւարթ երկրագործն էլ սկսել է իր գործունէութեան նոր տարեշրջանը: Նա այսօր իր ամբողջ ոյժը և նոյն իսկ կայքը յանձնում է հողին, սպասելով թէ սա ինչ կը վերադարձնէ: Մեր աւանդապահ գիւղացին, որ հեշտութեամբ չէ ընդունում նորամուծութիւններ, այնուամենայնիւ արել է իրական կեանքի մէջ բարեփոխութեան նախնական քայլեր, որոնց վիճակված է ժամանակով մեծ դեր կատարել կուլտուրական կեանքի բարեփոխութեան գործում: Մեր գիւղերն այցելողները կարող են արձանագրել բարեփոխութիւնների մի շարք սկզբնաւորութիւններ, կատարելագործված գիւղատնտեսական գործիքներ, ազնիւ տեսակի բոյսեր, ծառեր, բանջարներ և այլն:

Ամեն տեղ նկատված է, որ ձմեռը ինտելիգենտ մարդիկ պատահելով միմեանց զանազան ասպարէզներում, շփվելով իրար հետ հասարակական հիմնարկութիւնների մէջ՝ յաճախ կազմակերպում են յատուկ համախմբումներ: Նրանք հրաւիրում են զանազան ընթացիկ հարցերի առիթով խորհրդակցութիւններ, կազմակերպում են դասախօսութիւններ, գեղարուեստական զըւարճութիւններ, մտաւոր երեկոյթներ և այլն: Այն ինչ՝ գուցէ երբէք մեր կեանքը այնքան թոյլ և անշարժ չէ եղել, ինչքան այս անցած ձմեռ:

Մեր հասարակական կեանքի երեւոյթները չեն հետաքրքրում տեղական ինտելիգենցիային, չեն յուզում, չեն մղում նրան դէպի ներգործական մի քայլ՝ տեղական հարցերի քննութեան և աջող լուծման համար:

Տեղական ինտելիգենցիան հետաքրքրութիւն չը գտնելով իրան շրջապատող երեւոյթների մէջ՝ աչքը դարձրել է դուրսը և այնտեղից է սպասում հետաքրքրութիւն և պահանջ է զգում ոգեւորութեան և սպասում է, որ մի ուրիշը իրան դրդէ դէպի գործունէութիւն, մասնակից անելով հասարակական ընդհանուր ոգեւորիչ գործի և կապի գաւառական կեանքի արտայայտութիւնները աւելի լայն գաղափարական շարժումների և ոգեւորութեան հետ:

Պօղ. Զաքարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսում վատ եղանակները շարունակվում են: Քաղաքի շրջակայ սարերը դեռ ձիւնապատ են:

◆ Երկրագործութեան դեպարտամենտը 15,200 րուբլի է յատկացրել Կովկասում այս տարի փորձադաշտեր պահելու համար:

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի հասոյթը սկսած 1912 թ. մարտի 14-ից մինչև այս տարվայ մարտի 14-ը կազմում է ընդամենը 1.301,963 ր. 29 կ.:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ձեռք բերեց 500,000 րուբլու $5^{0}/_{0}$-ային պետական արժեթղթեր Միրզոյեանի դրամագլխի համար և տուեց ի պահ պետական բանկին: Ինչպէս յայտնի է, այդ դրամագլխի տոկոսիքով 70 թոշակի տեղ են յատկացված բարձր, միջին և ստորին կրթական հաստատութիւններում:

◆ Այսօր նշանակված է Թոքախտի դէմ կռւող կովկասեան ընկերութեան վարչութեան նիստը՝ Աբասթումանի սանատօրիայի կառուցման նախահաշիւը քննելու համար: Նախահաշւի հաստատութիւնից յետոյ սանատօրիայի կառուցմանը կը ձեռնարկվի գարնանից:

◆ Համաձայն քաղաքային դումայի միահամուռ ցանկութեան, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան դիմեց ձայնաւոր Բէզօբրազովին մի նամակով, որի մէջ նա խնդրում է յետ վերցնել իր հրաժարականը:

◆ Արդարադատութեան մինիստրութեան յանձնարարութեամբ, պաշտօնեայ Մէլնիկովը եկել է Թիֆլիս՝ ծանօթանալու համար Թիֆլիսում և Պեատիգօրսկում կառուցանվող բանտերի և նրանցում տիրող դրութեան հետ:

◆ Վրաց Պատմութեան ու Ազգագրական Ընկերութեան վարչութիւնը Վակէ կոչված քաղաքամասում վաճառում է 3000 քառ. սաժէն հողաբաժին 28,000 րուբլով, որի վրա կառուցվելու են էժան կացարաններ:

◆ Քաղաքային վերստուգիչ մասնաժողովի մէջ հրաժարված Եւանգուլեանի փոխարէն ընտրվեց Ի. Թամամշեանը:

◆ Թիֆլիսի 2-րդ հաշտարար դատարանում մարտի 19-ին նշանակված էր Սուլաքէլիձէի յայտնի գործը, որ մեղադրում էր քաղաքային սպանդանոցը կառուցանող ինժեներ Օհանջանեանին և կապալառու Վեախինեանսկին իրան կաշառակերութեան մէջ զրպարտելու համար: Օհանջանեանի կողմից կանչված 6 վկայից եկել էին քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ինժ. տեխ. Միրվէլով, նահ. ինժ. Անտոնով և այլն: Մեղադրում էր երդ.-հաւ. Մաչավարիանին Սուլաքէլիձէի հետ միասին: Իսկ մեղադրեալներին պաշտպանում էր երդ.-հաւ. Գրունենբէրգ: Հաշտարար դատաւորի օգնական Սօկօլովը սկզբից առաջարկեց կողմերին գործը վերջացնել հաշտութեամբ, սակայն ստացաւ մերժում: Մաչավարիանին և Սուլաքէլիձէն խնդրեցին դատաւորից գործի քննութիւնը յետաձգել և պահանջել քաղաքային վարչութեան վերստուգիչ յանձնաժողովի նիստերի արձանագրութիւնների պատճէնները: Վեախինեանսկին խնդրեց իբրև վկայ հրաւիրել իր կողմից սպանդանոցի կառուցմանը հետեւող իր եղբայր Մատվէյին: Դատաւորը բաւաբարութիւն տալով երկու միջնորդութեանը եւ՝ գործը յետաձգեց ապրիլի 1-ին:

◆ Մարտի 23-ին Հասարակական ակումբում ոչ ռեֆերատ, ոչ էլ ներկայացում չի լինի, այլ տեղի կունենայ զրոյց Իբսէնի պիէսի և Զեյնիձէի կարդացած ռեֆերատի շուրջ:

◆ Ինչպէս տեղեկացնում են մեզ, Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան առաջին համերգը լինելու է ապրիլի 3-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում: Վարչութիւնը ոչինչ չէ խնայելու այդ համերգի ծրագիրը ճոխացնելու և հանդիսաւոր կերպով կազմակերպելու համար:

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է տպել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է ի յիշատակ վաղամեռիկ օր. Անահիտ Աբէլեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն յօգուտ Ընկ. ձրի և էժանագին աշակերտական ճաշարանի հետեւեալ նուիրաբերութիւնները. Հեղինէ Առաստամեանից 10 ր., Սամսոն Յարութիւնեանից 25 ր., Նիկիտ Աղամեանից 25 ր.: Բացի դրանից, ի յիշատակ հանգուցեալի խորհրդի անդամների կողմից տրվելու է աղքատներին ճաշ:

◆ Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Երկրորդ իգական կիրակնօրեայ ուսումնարանի վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Հեղինէ ու Ներսէս Աբէլեաններին, որոնք ի յիշատակ իրանց վաղամեռիկ դուստր Անահիտի նուիրեցին 20 րուբլի թէ կիրակնօրեայ և թէ կար ու ձևի բաժանմունքի երեխաներին նախաճաշ տալու համար»:

◆ Ղլալ գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում «Մշակին» համակրող աստրախանցի այն մի խումբ անձերին, որոնք ներկայ տարվայ ընթացքում «Մշակի» մի օրինակ նուիրել են յիշեալ հաստատութեանը: Նոյնպէս՝ Բերդի «Ալալեան» գրադարանի վարչութիւնը շնորհակալութիւն է յայտնում Կոստ. Արզումանեանին նրա համար, որ սա նուիրել է ներկայ տարվայ ընթացքում մի օրինակ «Մշակ», ինչպէս և հայերէն ու ռուսերէն այլ օրաթերթեր ու շաբաթաթերթեր՝ յիշեալ հաստատութեանը:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց գիտնական Դաւիթ եպիսկոպոսը, որը մի տարի առաջ պաշտօնով տեղափոխվեց Պեատիգօրսկ, ներկայիս կրկին տեղափոխվելու է Վրաստան և նշանակվելու է Ալլավէրդիի ամբիոնի եպիսկոպոս:

◆ Վրաց ակումբի (նոր ակումբ) անդամների տարեկան ընդհանուր ժողովը 300 րուբլի է յատկացրել գիւղերում վրացերէն գրքեր տարածելու նպատակով: Յիշեալ գումարը յանձնվել է Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան վարչութեանը՝ ժողովի ցանկութիւնը ի կատար ածելու համար:

◆ Մարտի 23-ին Բաքւում վրաց յայտնի դասախօս Գրիգոլ Ռոբաքիձէն կը կարդայ մի դասախօսութիւն «Իլիա Ճավճավաձէն և նրա ստեղծագործութիւնը» թեմայով:

◆ Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացքների դասախօս Սարգիս Կակաբաձէն կիրակի, մարտի 17-ին, մի դասախօսութիւն կարդաց Շօթա Ռուսթավէլիի մասին, նոյն այդ դասընթացքներում: Այդ առիթով «Սախալխո Գազէթի» օրաթերթում խստապէս քննադատում են նրա դասախօսութիւնը, համարելով այն յոյժ թերի և իր մէջ ոչինչ չը պարունակող, այլ և անսիստեմ և զուրկ գիտական արժանիքներից:

◆ Մարտի 10-ին Քութայիսում մեծ ոգեւորութեամբ է կատարվել դերասան Վլադիմիր Ալէքսի-Մեսխիշվիլիի բեմական գործունէութեան 30-ամեայ յօբելեանը, գրում է «Սախալխո Գազէթին»:

◆ Երեքշաբթի, մարտի 26-ին, Ժողովրդական Տան կից գործող վրաց դրամատիկ սեկցիան կատարելու է Գ. Զաքաուրիի բեմական գործունէութեան 20-ամեայ յօբելեանը: Խաղացվելու է Վ. Գունիայի «Եղբայր և քոյր» պատմական պիէսը, մասնակցութեամբ տաղանդաւոր դերասանուհի Դաւիթաշվիլիի և վաստակաւոր դերասան Կ. Ղիփիանիի:

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս գիտենք հեռագիրներից, Պետական Դումայի ձայների մեծամասնութեամբ (բոլոր աջակողմեան ֆրակցիաների, սկսած սօյուզնիկներից մինչև հոկտեմբերեանները) անցանկալի համարեց կադէտների առաջարկած օրինագիծը ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին և մերժեց առաջարկութիւնը՝ կազմելու մի առանձին յանձնաժողով ընտրողական իրաւունքի ռեֆօրմների վերաբերեալ հարցերը քննելու համար: Միաժամանակ պատգամաւոր Կրուպենսկին իր մի քանի համախոհների հետ աշխատում է կազմել Դումայի մէջ կառավարութեան բարեացակամ մի մեծամասնութիւն:

Այս երկու դէպքերը ի նկատի ունենալով «Рус. Вѣд.» թերթը շատ իրաւացի կերպով ասում է, թէ պատգամաւոր Կրուպենսկին անօգուտ տեղ աշխատում է, որովհետև այն մեծամասնութիւնը, որի կազմման համար նա ջանում է, արդէն կայ և կազմակերպված է, քանի որ բոլոր աջակողմեան ֆրակցիաները և հոկտեմբերեանները միացան և տապալեցին մի օրինագիծ, որի իրագործումը կարող էր անպատեհ լինել կառավարութեան համար: Քանի որ յունիսի 3-ի օրէնքը գոյութիւն ունի, Դումայում միշտ կը լինի կառավարութեան բարեացակամ մեծամասնութիւն: Եւ որովհետև աջակողմեանները և հոկտեմբերեանները իրանց պատգամաւոր ընտրելու աջողութիւնը պարտական են միայն յունիսի 3-ի օրէնքին, ուստի բնական է,

---

ֆլանդրացիներն ու լեհացիները բանակցութիւններ էին վարում «Ազատարար Ֆրանսիայի» հետ և նոյնիսկ Ֆրանսիական զօրքի մէջ զինւոր գրվում: Միթէ այս բոլորը պայմանների մի չափազանց ձեռնտու կուտակումն չէ, որպէսզի Ֆրանսիական գործիչները, շնորհիւ իրանց անանուն զօրաբանակների ու ժողովրդի, յաղթանակով դուրս գային պայքարից:

Ուրեմն ինչ պէտք է անէր այս բոլորի հանդէպ մի, ասենք, հանճարեղ զօրավար. նա պէտք է օգտվէր այդ ամենից՝ արտայայտելու իր անհատականութիւնը ամբողջովին, և այդ բանով նա կապացուցանէր իր շնորհալիութիւնը: Բայց այդ չէ նշանակում, որ նրա անհատականութեան ոյժը կարող էր նոր հասարակական պայմաններ ստեղծել կամ նրանց ուղղութիւնը փոխել: Որ Նապոլէոնը իբրև զօրավար խիստ յարմար պայմանների մէջ է հանդէս եկել Եւրոպայում. որ նրա երեան գալը և նրա ամբողջ գործունէութիւնը անմիջական արդիւնքն է հասարակական այն ժամանակվայ պայմանների. որ եւրոպական քարտէզի փոփոխութեան մէջ, որպէս զօրավարներ, չափազանց խոշոր դեր են խաղացել նաև ուրիշները,—դրա ապացոյցները պարզապէս ընդգծված են ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատմութեան մէջ: Յեղափոխական պատերազմների պատմութեան մէջ չէ կարելի լռութեան տալ Պիշեգրիւին, որ ամբողջ Հոլլանդիան գրաւող զօրքի նշանաւոր ղեկավարն էր, Մորօյին, որ ռազմագիտական ընդունակութիւնների փայլուն ապացոյցներ է տուել. Ժուրդանին, որ Հռէնոսի ամբողջ ձախ ափի գրաւման մէջ է հռչակվել. Կարնօյին, մի եռանդոտ ու հեռատես անձն, որ անդադար սպառազինված զօրախմբեր էր կազմակերպում և կռւի դաշտը ուղարկում. Ժուբէրին, մի երիտասարդ գեներալ, որին համեմատում էին Նապոլէոնի հետ, բայց մահաբեր գնդակը շատ շուտ է կտրել նրա կեանքի թելը, և նա չէ կարողացել ցոյց տալ իր ընդունակութիւնները լայն ծաւալով: Իսկ եթէ Նապոլէոնի ռազմագիտական հանճարի ամենախոշոր արտայայտութիւններից մէկը Աուստեռլիցի հռչակաւոր ճակատամարտն է համարվում (1805 թ.), որ նաև «երեք կայսրների ճակատամարտ» է կոչվում (այդտեղ էին գտնվում Ֆրանց II, Ալէքսանդր I և Նապոլէոն), այդտեղ նրան քիչ չեն նպաստել նաև հարաւ-գերմանական մանր թագաւորները:

Ինչպէս Լիւնէվիլի, Պրէսբուրգի և Թիլզիտի հաշտութեան հետեւանքները, այնպէս էլ հռոմէական սրբազան կայսրութեան վերջնական անկումը—Ֆրանսիայի պատերազմական գործողութիւնների շնորհիւ՝ Նապոլէոնի ղեկավարութեամբ—տրամաբանական արդիւնքն էին իրար հետ պատճառակցական կապերով շաղկապված հասարակական վերոյիշեալ պայմանների: Ո՛չ թէ Նապոլէոնն էր պայմաններ ու տրամադրութիւններ ստեղծում, այլ Ֆրանսիայի պատմական յեղաշրջումից առաջացած պայմանների հոսանքն էր տանում Նապոլէոնին: Տիրող հանգամանքները առաջադրել էին անհրաժեշտութիւնների մի շարք. այդ անհրաժեշտութիւններից մէկը հէնց յեղափոխական պատերազմներն էին՝ Ֆրանսիայի ներքին անկախութիւնը պաշտպանելու համար, որոնք և անօրինակ թափ ստացան կռւի դաշտում: Այդպիսով հասարակական կեանքը ինքն էր առաջացրել կարելիութիւնների փոխադարձօրէն շաղկապված մի շղթայ. ըստ որում այդ կարելիութիւնները իրականութիւն դարձնելու, նրանց իրական կեանքի մէջ մարմնացնելու համար անհրաժեշտ էին գործող անհատներ. և որքան աւելի շնորհալի, որքան աւելի հեռատես ու հանճարեղ եղան անհատները, այնքան աւելի լիակատար և ամփոփ իրականացումն ստացան հասարակական պայմաններից առաջացած այդ կարելիութիւնները: Հասարակական այդօրինակ պայմաններից ստեղծված տրամադրութեան բազմաթիւ մանր ու խոշոր արտայայտիչներից, այն է՝ կարելիութիւնները իրականութիւն դարձնողներից, ամենից աջողակը Նապոլէոնն էր, որին Տուլօնի ճակատամարտից սկսած մինչև Ֆրանսիական գահը մի խելագար թափով առաջ տանողը հասարակական պայմաններն էին՝ մասսայով և նրա հրապարակ նետած եռանդոտ գործիչների լէգիօններով: Եւ եթէ սուբյեկտիւիստների տեսակէտով ընդունելու լինենք անհատի առաջնակարգ դերը պատմական երեւոյթների մէջ, այն դէպքում միանգամայն անբացատրելի կը մնար Նապոլէոնի չարաչար պարտութիւնը ռուսական հողի վրա 1812 թւին: Չէ որ նա իր տրամադրութեան տակ կէս միլիոնից աւելի մի զօրաբանակ ունէր. չէ որ իր անհատական արժանիքների ոյժով, իր հանճարեղութեան թափով նա կարող պիտի լինէր հմայել զօրքերին և ապա նոր պայմաններ հաղորդել ռուսական կեանքին, ապացուցանելու համար որ «ամեն ինչ քաջաց՝ զէնք իւրեանց» է: Եթէ Նապոլէոնը աջողութիւն ունեցաւ Արեւմտեան-Եւրոպայում, նա չէր կարող նոյնը ունենալ Եւրոպայի արեւելքում: Առաջինում նրան նպաստեցին այն պայմանները, որոնք կապված էին միջնադարեան ֆէօդալիզմի տապալման և երրորդ դասակարգի բարձրացման հետ: Մինչդեռ ճորտատիրական արեւելքը—Ռուսաստանը իր թէ ներքին կառուցուածքով և թէ արտաքին դրութիւնով—ամբողջովին պիտի դուրս գար Նապոլէոնի դէմ: Եւ վերջապէս Նապոլէոնի սոսկալի պարտութիւնը ծիծաղելի է բացատրել ռուսական հիւսիսի դաժան ձմեռով. դա կը նշանակէ մի ժողովրդի տնտեսական բազսի վրա բարձրացած մի ամբողջ վերնաշէնքի էութիւնը բացատրել աննշան պատահականութիւններով:

Թէպէտ մենք երկար կանգ առանք Նապոլէոնի անձնաւորութեան վրա, հերքելու համար սուբյեկտիւիստների տեսակէտը, բայց մենք չենք կարող լռութեամբ անցնել և մի այլ հանգամանք, որպէսզի դրանով մեր թէզիսը աւելի եւս հիմնաւորած լինենք: «Բրիւմէրի 18-ի» յեղաշրջումը Ֆրանսիայում, որով պետական կազմի ձեւը հանրապետականից միապետական դարձաւ, նոյնպէս արդիւնք չէր Նապոլէոնի անհատական կամքի ու ցանկութեան, այլ զուտ հասարակական հանգամանքների: Այդ հանգամանքներից առաջնակարգը հէնց այն էր, որ երրորդ դասակարգի սեփականատէր բուրժուական տարրը, յեղափոխութիւնից ստանալով իր ցանկացածը, միանգամայն գոհ էր վերահաս ռէակցիայից: Այդ դասակարգը մինչև իր նպատակին հասնելը գրկախառնվում էր սեփականազուրկ դեմօկրատիայի հետ՝ աւատական միապետութիւնը տապալելու համար: Սակայն նա երես դարձրեց նոյն դեմօկրատիայից այն ժամանակ, երբ իր սօցիալական դերակշռութիւնը արդէն որոշ չափով ամրացրեց ֆէօդալիզմի աւերակների վրա: Սեփականազուրկ տարրը, յեղափոխական՝ ըստ իր դրութեան, դժգոհ էր, որովհետեւ նրա ոչ միայն տնտեսական բարեկեցութեան ակնկալութիւնները, այլև քաղաքական տարրական պահանջները հեռու մնացին ամեն իրագործումից: Ընդհակառակը, որպէս դժգոհ տարրի, բուրժուազիան նրան այժմ վտանգաւոր էր համարում, որովհետև նրա պահանջները սպառնական էին մասնաւոր սեփականութեան սկզբունքի դէմ: Բուրժուազիան շատ լաւ ըմբռնել էր, որ իր վաղեմի դաշնակիցը կարող է իր ոյժը այժմ ուրիշ կողմ դարձնել և ծայր տալ մի նոր անիշխանութեան: Մանաւանդ դեմօկրատիայի սկսած շարժումը հակաբուրժուական գոյն էր ստանում. նա գալիս էր ցածից, իր հետ սպառնալիքներ բերում, տիրապետութեան շրջանը նոր թեակոխած բուրժուազիային անհանգստութիւն պատճառելով: Եւ ահա այդ պատճառներից խուսափելու համար նոր դասակարգը անհրաժեշտ էր համարում զինւորական մի կազմակերպված ոյժ ունենալ: Այդ ոյժը պէտք է համապատասխան լինէր նոր դասակարգի շահերին, նրա ձգտումներին. նա պէտք է պաշտպանէր սեփականութեան սրբազան սկզբունքը, դասային խտրութիւնների ժխտման գաղափարը, պաշտպանէր և ոյժ տար նոր դասակարգի քաղաքացիական բոլոր հիմնարկութիւններին և այլն և այլն: Եւ այս պահանջը տիրապետող դասակարգի շահերի տեսակէտից անհրաժեշտութիւն էր, նոր հասարակական պայմաններից առաջացած մի հրամայական պահանջ, որը իրագործելու համար կատարվեց «Բրիւմէրի 18-ի» յեղաշրջումը: Այդտեղ նկատելի դեր խաղաց Նապոլէոնը ոչ որպէս յեղաշրջման պայմաններ ստեղծող, այլ իբրև մէկը այն գործիչներից, որոնք բուրժուական տենչերի հարազատ և հետեւողական արտայայտիչը եղան:

Նապոլէոնը հռչակվեց այդ դասակարգի շնորհիւ. նա ըմբռնեց «նոր հասարակութեան» մէջ եղած ռէալ ոյժերի յարաբերութիւնը և կանգնեց այն ուղղութեան վրա, որով աստիճանաբար կազմաւորվում ու ամրանում էր այդ դասակարգը: Ուրեմն Նապոլէոնը այդ նոր դասակարգի բազմակողմանի գործիչն էր, նրանց տենչերի արտայայտիչը, նրանց հասարակական պայմաններից առաջացած կարելիութիւնները իրականութիւն դարձնողը, վերջապէս նա ամբողջովին այդ դասակարգի ծնունդն էր:

Նապոլէոնի զինւորական դիկտատուրան կոչնչանար մի ամսում, եթէ նրա հիմնական բազիսը տիրապետող, սեփականատէր բուրժուազիան չը լինէր: Աւատական-արիստոկրատական կառավարութեանը յաջորդել էր մի նոր դասակարգ, որը այժմ պետական ամբողջ մեխանիզմին պիտի հաղորդէր իր դասակարգային շահերին համապատասխանող ուրոյն բնոյթ: Իսկ ֆրանսիական միջին, մանր բուրժուական խաւերը, որոնք իրանց ոյժերը սպառել էին յեղաշրջման առաջին շրջանում, յոգնել էին և տրամադիր էին ենթարկվելու ամեն մի իշխանութեան, որ կապահովէր նրանց առօրեայ աշխատանքը: Ինչ վերաբերում է բանւորներին, սրանք բողոքող էին և բողոքող էլ մնացին. բայց որովհետև նրանք չունէին ոչ մի կազմակերպութիւն և մանաւանդ տնտեսական ճգնաժամը ամենից աւելի նրանց էր ճնշում, իսկ գլխաւորապէս նրանց արեան գնով կատարված յեղաշրջումը ոչինչ դրական չը բերեց նրանց համար, ուստի և նրանք միանգամայն անտարբեր մնացին «Բրիւմէրի 18-ի» յեղաշրջման հանդէպ: Օգտվելով այդ ընդհանուր տրամադրութիւնից, օգտվելով բուրժուական գերիշխանութիւնից, Նապոլէոնը դարձաւ Ֆրանսիայի կայսրը:

Միթէ այս բոլորից յետոյ կարելի է ասել, թէ յեղափոխական պատերազմների աջողութիւնը արդիւնք է եղել Նապոլէոնի հանճարի. միթէ կարելի է ասել, թէ պետական յեղաշրջումը (Բրիւմէրի 18-ի=9 նոյեմբերի 1799 թ.) նոյնպէս Նապոլէոնի անհատական կամքի ու տրամադրութեան արդիւնք է:

Այո, Նապոլէոնը Նապոլէոն չէր լինի, եթէ նրա գործունէութեան բազիսը «երրորդ դասակարգը» չը լինէր, եթէ իր հետ չունենար ֆրանսիական յեղափոխական արմիան. նոյն կերպ՝ այդ արմիան չէր կարող անել այն, ինչ արաւ, եթէ չը լինէր յեղափոխութեան արդիւնք. իսկ յեղափոխութիւն չէր լինի, եթէ Ֆրանսիայի տնտեսական կեանքում արտադրութեան նոր եղանակներ հանդէս չը գային:

Սուրխաթեան

(Կը շարունակվի)

որ նրանք քաղաքական ինքնապաշտպանութեան ակտ կատարած կը լինէին, եթէ համաձայնէին րէֆօրմներ մտցնել ընտրողական օրէնքի մէջ։ Յունիսի 3-ի օրէնքը լայն լիազօրութիւններ է տալիս կառավարութեանը և հնարաւորութիւն է տալիս իրան ջոկել ըստ իր հայեցողութեան այծերը ոչխարներից և թոյլ տալ միայն վերջիններին մտնել Պետական Դումա։ Հոկտեմբերեաններին, ինչպէս և աջակողմեաններին հէնց այդպիսի օրէնք և հարկաւոր է, որպէս զի իրանք կարողանան մտնել Դումա։

Ուրեմն, ներկայ Դումայի օրով ընտրողական րէֆօրմի օրինագիծը պէտք է թաղված համարել։ Այն կուսակցութիւնները, որոնք, շնորհիւ յունիսի 3-ի օրէնքի, արտօնեալ վիճակի մէջ են գտնվում, յօժարակամ ինքնասպանութիւն չեն գործի և չեն հրաժարվի իրանց արտօնութիւններից։ Որպէսզի առանձնաշնորհեալ ներկայացուցչութիւնը կարողանայ վերածվել դեմօկրատիական ներկայացուցչութեան, պէտք է դրա համար աշխատէ հասարակական կարծիքը այսուհետև, քանի որ Դումայի օպպօզիցիան իր անելիքը արեց և անհետևանք. այժմ նրա աշխատութիւնը պէտք է շարունակէ հասարակութիւնը։

Այս առիթով նոյն «Рус. Вѣд.» թերթը մի շատ հեգնական նկատողութիւն է անում։ Ինչպէս գիտենք, երբ Ադրիանուպօլսի անկման լուրը ստացվեց, Դուման ցնծութեան մեծ ցոյց սարքեց և ամենից շատ ցնծացողը Կրուպէնսկին էր։ «Եթէ,—ասում է թերթը,—տակաւ թոյլ տար բուլղարական մինիստրներ Դանէվին և Բօբչէվին խօսել, նրանք կասէին Կրուպէնսկուն և ընդհանուր ընտրողական իրաւունքի անհրաժեշտութիւնը հերքող պատգամաւորներին. պարոններ, դուք հրճվում էք բուլղարների յաղթութեամբ, բայց մի մոռացէք, որ այդ յաղթութիւնը Բուլղարիան պարտական է ընդհանուր ընտրողական իրաւունքին»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 մարտի

Պարոն Լ. Դ., կարդացի ձեր պատասխանը։ Նախակարապետ բառը նոյնքան ուշադրութիւն էր գրաւել նոյն գիշեր, որ մի պարոն ինձ հարցնում է թէ՝ «մի՞թէ Ֆրանսիայում Կարապետ անունով գրական-հասարակական գործիչ է եղել»։

Այս ուղղումն էլ աւելացրէք ձեր նօթերին։

Գասպար Իփէկեան

—

Թիֆլիս, 20 մարտի

Իմ մէջս վաղուց մէկ միտք յղացաւ հիմնել մարդասիրական ընկերութիւն։ Թէ ինչ օգուտ կը բերի այդ ընկերութիւնը, ահա 3 տարի է, որ ես բացատրում եմ ժողովրդին այդ մասին և շատ տեղերից համակրական նամակներ ստացայ։ Թէև ճանապարհը շատ փշոտ է, ամենքը համակրում և գովում են, բայց ոչ ոք մէջք չէ տալիս։ Ահա այս Մեծ-Պասի մէջ, կիրակի օրերը, ճաշվայ պատարագին պէտք է խօսեմ միևնոյն առարկայի մասին։ Ուստի խնդրում եմ հայ ժողովրդին գալ Մողնու եկեղեցի լսելու այդ ընկերութեան մասին, և աշխատենք գլուխ բերել այդ աստուածահաճոյ և մարդկանց օգտակար գործը։

Սիմէօն ա.-ք. Զմշկեան

—

Բագու, 14 մարտի

«Մշակի» № 50-ում Ա. Բարութ. մի գրութիւն է զետեղել «Դատի արդիւնք» վերնագրով, որտեղ ի միջի այլոց անվայել ակնարկներ է արել մեր հասցէին և գլխիվայր է ներկայացրել իրողութիւնը։

Առ այժմ ըստ էութեան չը խօսելով այդ գործի մասին, աւելորդ չենք համարում յայտնել, որ թեմ. առաջնորդը հակառակ մեր կամքի եւ ցանկութեան է դադարեցրել գործի քննութիւնը... Իսկ թէ Տ. Տէր-Գրիգորեանը որքան բարձր կամ որքան ցածր միտումներով է ղեկավարվել, որ իր գանգատը յետ է վերցրել պետական դատարանից, մեզ բնաւ չէ հետաքրքրում։ Եւ մենք չենք բնաւ, որ պէտք է զգանք այդ դատի «վերջաւորութեան անախորժութիւնը»...

Եւ, վերջապէս, դատի արդիւնքը այն է եղել, որ դատախազի միջոցով դատ յարուցանող ուսուցիչը «խոհեմութիւն է արել ընդունելու» հոգաբարձութեան առաջարկութիւնը, յետ վերցնելով իր դատը...

Սակայն առ այժմ այսքան։

Սիմ. Հովուեան
Բ. Սահակեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Սիլիվրիայի մօտ (Մարմարա ծովի ափին) Թիւրքերը կորցրին 13,000 սպանված և 10,000 վիրաւոր։

◆ «Frankf. zeit.»-ի ասելով, բուլղարները Ադրիանուպօլիսը վերցնելիս կորցրին 5000 սպանված ու վիրաւոր։

◆ Ադրիանուպօլսի ներսում ձեռնակռուի ժամանակ զոհվեցին մօտ 10,000 մարդ, որոնց թւում շատ խաղաղ բնակիչներ։

◆ Դէրկօսի մօտ բուլղարները ոչնչացրին 1600 հոգուց բաղկացած թիւրքական երկու զօրամաս։

◆ Մանչեստր հեռագիրը տեղեկացնում է, որ հէնց որ Կ. Պոլսում ստացվեց Ադրիանուպօլսի անկման տեղեկութիւնը, սուլթանը ուշաթափվեց, մեծ վէզիրը փորձեց անձնասպան լինել։ Կաբինէտը իսկոյն հրաժարական տուեց։

◆ 15,000 յոյն զինուոր առաջարկում են Չաթալջա՝ դաշնակիցներին օգնելու համար։ Չաթալջայում կռիւը կատաղութեամբ շարունակվում է։

◆ Էլբասանի մօտ թիւրքերի ունեցած կորուստները շատ խոշոր են. 12 թիւրք օֆիցեր և 320 զինուոր գերի ընկան, սերբերը կորցրին 60 զինուոր և 2 օֆիցեր։ Կռիւը շարունակվում է։

◆ Մահմուդ-Շէվքէթ-փաշան խորհուրդ տուեց սուլթանին այժմ արդէն զոհացումն տալ դաշնակիցների բոլոր պահանջներին՝ Կ. Պոլիսը փրկելու նպատակով։

◆ Ռուսաստանը գտնում է, որ Ալբանիան պէտք է մնայ աւտօնոմ և գտնվելու է սուլթանի գերիշխանութեան ներքոյ։ Կարգուկանոնի պաշտպանութեան համար լինելու են զինված թիւրքական զօրքեր։

◆ Լուրերի համաձայն՝ բուլղարները յարձակողական քայլերթով դիմում են դէպի Կ. Պոլիս։

◆ Կ. Պոլսում դաւադիրները փորձեցին յօդս ցնդեցնել Բ. Դրան շէնքը։ Գտնվեցին ուժանակ ու ռումբեր։ Կալանաւորված են 3 օֆիցեր։

◆ Կ. Պոլսում թիւրքուհիները ցոյց արին Բ. Դրան առաջ, պահանջելով դադարեցնել պատերազմը։

◆ Ֆրանսիայի բոլոր բժշկական ֆակուլտէտների ուսանողների կոնգրէսը (Պարիզում) որոշեց հեռացնել օտարազգի բոլոր բժիշկներին հասարակական հիւանդանոցներից։

◆ Մահմուդ-Շէվքէթ-փաշան համաձայնեց, որպէսզի օտարերկրեայ նաւերից զօրքեր ափ իջնեն Կ. Պոլսում, և խնդրեց ռուսաց դեսպան Գիրսին նպաստել հաշտութիւն կնքելուն։

◆ Հաղորդում են, որ սերբերը վճռել են դադարեցնել Սկիւտարի պաշարումը։

◆ Լուրերի համաձայն՝ աւստրիական ռազմի նաւատորմը դիմեց Անտիվարի։

◆ «Figaro»-ն հաւատացնում է, որ Կօկօվցէվը դեսպան է նշանակվում Իզվօլսկիի տեղ Պարիզում, Իզվօլսկին տեղափոխվում է Լօնդօն։

◆ Ցետինիէից հեռագրում են Լօնդօն, թէ իբր Նիկօլայ թագաւորը անդամալոյծ է դարձել։

◆ Զինուորա-բժշկական ճեմարանի փակման հարցը յուզում է ամբողջ Ռուսաստանին։ Ժողովրդ. լուս. նախկին մինիստր Տօլստոյն ասաց, թէ նա ողբում է այդ չը լսված դէպքի առիթով։ Ամեն կողմից՝ արձակված ուսանողները ստանում են համակրանք։ Լուրերի համաձայն՝ ուսանողների մեծ մասը յանձնվելու է զինուորական դատարանին։ Ուսանողները յուսահատված են։

◆ Աջակողմեանները աշխատում են տապալել Կօկօվցեվին և նոր կաբինէտը կազմել Դուրնօվօյի գլխաւորութեամբ։

◆ Սենատօրների կարծիքով, «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործով դատապարտվածները կարող են Բարձրագոյն ողորմածութեան կարգով խնդրել ներման մասին, եթէ նրանց նոյնպէս վերաբերել են քննիչ Լըժինի խարդախութիւնները։

◆ «Рѣчь»-ի ասելով՝ զինուորական մինիստր Սուխօմլինօվին յաջորդելու է գեներալ Գալիցինը։

◆ Պետերբուրգում արգելվեցին երեք դասախօսութիւն Կարլ-Մարքսի մասին։

◆ Ձեռնարկված է Բօրժօմ—Կարս երկաթուղագծի կառուցմանը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

19 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցօրեւեար Տագանցէվը ստացաւ բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, որոնց թւումն է նրա աշակերտների և ծառայակիցների հեռագիրը, Կօկօվցէվի, Խարիտօնօվի, Տիմաշէվի, Տանէեվի, բարօն Բուդբէրգի, Շչէգլօվիտօվի և այլոց ստորագրութեամբ, Կրիվօշէինի, Ռուխլօվի, Կրժանօվսկիի, Վիտտէի, մի շարք բարձր կրթական հաստատութիւնների, ուսումնական ընկերութիւնների, դատաստանական պալատների և դատարանների հեռագիրները։ Ցօրեւեարը ընդունեց շատ պատգամաւորութիւններ։ Ցօրեւեարին շնորհաւորելու եկան Պետական Խորհրդի անդամները նախագահի առաջնորդութեամբ։

Զինուորա-բժշկական ճեմարանում սկսվեց խնդրագրերի ընդունելութիւն՝ արձակված ուսանողներին նոր կանօնադրութեան հիմունքներով վերստին ընդունելու մասին։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Երեք օր անընդհատ շարունակվող կատաղի մրրիկը մեծ վնասներ պատճառեց ծովագնացներին։ Մի քանի առագաստաւոր նաւեր խորտակվեցին, կան մարդկային զոհեր։

ՄԱԴՐԻԴ։ Թագաւորը վաւերացրեց ֆրանս-սպանական պայմանագիրը։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Ֆինանսների մինիստրը յայտնեց Գիւեր քաղաքին, որ յիշեալ քաղաքում վճռված է հիմնել ունգարական առաջին թնդանօթային գործարանը։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքագլխի պաշտօնի համար երկրորդ թեկնածու ընտրվեց առաջադիմականների թեկնածու պրօֆ. Չապլիգինը։

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէթղթերի կուրսերը

20 մարտի

I կ. Ներք. փոխ. խ. տոմս.	453 ր. — կ.
II » » »	353 ր. — կ.
III Ազնուակ. բանկ. »	332 ր. — կ.
4% Պետական ռենտա	93 ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ. 1906 թ.	103 ր. 12½ կ.
5% Ներքին » 1905 » I հրատ.	104 ր. 87½ կ.
5% » » II հրատ.	104 ր. 87½ կ.
5% Պետ. Ազնւ. բանկ. գր. թ.	101 ր. — կ.
4½ » » » »	90 ր. 75 կ.
4% » » » »	89 ր. 50 կ.
3½% » » » »	84 ր. — կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	101 ր. — կ.
4½% » » » »	91 ր. — կ.
4% » » » »	90 ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	105 ր. — կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	95 ր. 25 կ.
Բեռլին 100 մարկ	46 ր. 56 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 70 կ.
Թաւրիզ 10 դրամ	— ր. — կ.
Կ. Պոլիս 1 լիրա	— ր. — կ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առողջութեան Համբաւաբեր

«Դ-ր Մէյէրի Սոստօկսիրէնի» կարճժամանակեայ (3 շաբ.) գործածութիւնից յետոյ թեթեւութիւն նկատվեց, մինչդեռ առաջներում լուծողականի ամենամեծ չափն անգամ անհետևանք էր մնում։ Դ-ր Բիրկին։ Սամարա։ ԴԵՂԱՏՈՒՍԸ. Վերցրէք մօտակայ դեղատանը կամ դեղավաճառում «Դ-ր Մէյէրի Սոստօկսիրէնից» 2 շաքած բաւականաչափ մի արկղիկ և ընդունէք 1—2 տաբլէտկա օրական 3 անգամ, մինչև որ ձեր մարսողութիւնը կը կանօնաւորվի։
«Դ-ր Մէյէրի Սոստօկսիրէնը» միանգամայն անվնաս է։ Բուժումը կատարեալ է լինում։

(П. 49319)

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.—
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ձմեռային երթեւեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանօնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատօլիայի-Պարսից-ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանօնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Սօլօլակսկայա փողոց, № 8.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ճշտտոու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—92

ԴՈԿՏՕՐ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Շարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կազմում պրօֆեսօրների հետ։
Նոր հասցէ՝ Berlin, N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden 92—74.
(չ.) 148. 10—6

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունում (12½—2 ժ. ցերեկվայ։
յետ ճաշու (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկեվիչ փողոցի) Տելէֆօն № 1175.
(չ. կ.) 377. 100—79

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ձմեռային երթեւեկութիւն)
Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 12 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ Պօստատար գնացքը № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ. Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.՝ Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Մարդատար գնացքը № 11—10 ժ. 3 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ Պօստատար գնացքը № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստատար գնացքը № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 րմ առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 10 ր. եր. Պօստատար գնացքը № 3—9 ժ. առ.։ Մարդատար գնացքը № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—8 ժ. 50 ր. առ., Պօստատար գնացքը № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ Խառն գնացքը № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստատար գնացքը №40/3—8 ժ. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 83/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ԶԻԿՕՂԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներքային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻՏԵՐ-ԱՐԾԵՂԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—32

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱՆ
ընդունում է ցինկօգրաֆիական ԿԼԻՇԷՆԵՐԻ պատուէրներ և պատրաստում է ճշտութեամբ, մաքուր և մատչելի գներով։
Большая-Ванкская ул. № 12.
(հ. կ.) 222. 8—1

Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Յանձն է առնում քաղաքացիական դատաստանական գործերի վերաբերմամբ։ Զուգնանիտերից ձրի։ Судебная ул. д. № 4, кв. 6. Ընդունելութիւնները առաւօտեան ժամը 10-ից մինչև ժամը 1-ը ցերեկվայ։
(հ. կ.) 180. 5—5

Լեւոն Մանուէլեան
վաճառվում են հետեւեալ գրքերը.
ՄԱԳԴԱ, դրամա 5 գործ. . գինը 40 կ.
ԴՕԿՏՕՐ ԲՕՇԱՑԵԱՆ, կոմ. 4 գ. գինը 50 կ.
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ գիրք երկրորդ . . . գինը 40 կ.
ՎԵՐԱԾՆՎԱԾ, դրամա 3 գործ. գինը 35 կ.
Հասցէ՝ Тифлисъ, Гудовича ул. д. № 6.
223. 2—2

ԾԱԽՎՈՒՄ Է
ՄԻ ՏՈՒՆ
75 քառակուսի սաժէն գետնով, մի յարկանի, բաղկացած 5 սենեակից, խոհանոցներից և նկուղից։ Տունը գտնվում է Պեսկօվսկի տուպիկում № 4 (Փետրվարի 19-ի փողոցի վրա)։ Բանկի պարտքն է 1500 ռ.։ Դիմել՝ II Тумановская ул. № 15, кв. 3.
(ե.հ.) 207. 3—3

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ծխական հոգաբարձութիւնը խնդրում է այն անձանց, որոնք կը կամենային առաջիկայ 1913—14 ուսումն. թւից ստանձնել հոգաբարձութեանս խնամքին յանձնված դպրոցի
ՏԵՍՉԻ ՊԱՇՏՕՆԸ,
որ բաց է մնացել Աւ. Արասխանեանի մահվամբ, այժմեանից մտնել բանակցութեան մէջ հոգաբարձութեանս հետ։ Դպրոցը երկսեռ է, ունի 500 աշ.-աշակերտուհի, դասընթացը հինգամեայ, ստուգապարար պէտք է դաստիար ուսումնական։
Թեկնածուն լինելու է բարձրագոյն կրթութեամբ, բայց նշանակութիւն կը տրվի նաև փորձառութեանն ու անցեալ գործունէութեանը։ Տեսչի ընտրութիւնը պէտք է վերջացած լինի մայիսին։
Դիմել հոգաբարձութեանս։
(ա.օ.) 224. 5—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ և ուղարկվեց բաժանորդներին
ՊԱՏԱՆԻ
ԱԼՄԱՆԱԽԻ I (փետրվար) գրքոյկը մեծացրած դիրքով
Գինն է 20 կ., ճանապարհածախսով 25 կ.։
Շարունակվում է 1913 թւի բաժանորդագրութիւնը։
Թիֆլիսում՝ 6 գիրքը 1 ր., գաւառ՝ 1 ր. 25 կ., արտասահման 5 ֆր.։
ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է բաժանորդագրվել «ԳԻՐ» և «ՆՈՐ ԿԵԱՆՔ» գրախանութներում։
ԽՄԲԱԳՐՎՈՒՄ Է II ԳՐՔՈՅԿԸ ԵՒ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ։
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Ходживанкская, 5, М. Эприкянъ կամ Tiflis, Caucase, Rue Khodjiwank, M. Eprikiantz.
228. 1—1

Мраморно-мозаичное заведеніе
Б. Вилла и А. Рицци
Михайловскій пр. № 42. Телефонъ № 620.
ИМѢЮТСЯ всегда въ большомъ выборѣ готовыхъ ПАМЯТНИКОВЪ изъ разнаго порода МРАМОРА и ГРАНИТА.
Принимаются всевозможныя МОЗАИЧНЫЯ работы и ОБЛИЦОВКИ ФАСАДОВЪ ЕСТЕСТВЕННЫМЪ и ИСКУССТВЕННЫМЪ КАМНЕМЪ.
(հ. կ.) 171. 12—6

„ՆՈՐ ՀՕՍԱՆՔ“
Գրական, գիտական, հասարակական եւ քաղաքական ԱՄՍԱԳԻՐ
Տարեկան 12 գիրք, իւրաքանչիւրը ոչ պակաս 160 մեծադիր էջից։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Կովկաս եւ Ռուսաստան		Արտասահման	
Տարեկան	7 ր.	Տարեկան	24 ֆրանկ
Կէս տարվանը	4 ր.	Կէս տարվանը	14 »
Երեք ամիսը	2 ր. 25 կ.	Երեք ամիսը	8 »

Առանձին համարը 80 կոպ.
ՀՐԱՒԻՐՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՆ.
*Աբեղեան Ա., Ադոնց Ն., *Աթաբէկեան Լ., *Ալիխանեան Ե., *Ահարոնեան Ա., *Աղայեան Ն., *Անանուն Դ., *Արա—ս, Բարսեղեան Գ. (Թիւրքիա), *Բժիկեան Հ. Գ. (Թիւրքիա), Գաբրիէլեան Դ., *Գարդիշեան Գ., *Դանիէլեան Լ., *Դեմիրճեան Դ., Եսայեան տիկ. Զ. (Թիւրքիա), Զ. Ս. (Թիւրքիա), Զարդարեան Ռ. (Թիւրքիա), Զօհրապ Գ. (Թիւրքիա), *Թումանեան Յովհ., Իսահակեան Ավ., *Լազարեան Յովհ., *Լէյլի, *Լիսիցեան Ստ., Խան (Թիւրքիա), *Խանզադեան Յ., *Խատիսեան Գ., Խ. Գ. (Թիւրքիա), *Ղազարեան Ա., *Ղլտճեան Ա., Մակինցեան Պ., *Մանուէլեան Մ., Մասէհեան Յովհ.-Խան, *Միրզայեան Յովս. (Պարսկաստան), *Միսաքեան Շ. (Թիւրքիա), *Միքայէլեան Կ., *Մուսայէլեան Հ., *Յակոբեան Ս., *Յարութիւնեան Մ., *Յովհաննիսեան Աբ., Յովհաննիսեան Մ., *Յովհաննիսեան Յովս. (Պարս.), *Յովհաննիսեան Տ., *Շանթ Լևոն, *Շահխաթունեան Աւ., Պիճիկեան Գ., *Ջամալեան Ա., *Ռէն, *Սէյրի, Սուրխաթեան, *Վալադեան Վ., Տէրեան Վ., *Տէրտէրեան Ա., *Տէր-Պօղոսեան Ա., Տէր-Օհանեան Վ., *Տիգրանեան օր. Ա., *Տիգրանեան Ս., *Փափազեան Վ., Քիւֆէճեան Ե. (Թիւրքիա), Օտեան Ե. (Թիւրքիա), *Ֆրանգեան Ե. և ուրիշները։
№ 1-ը լոյս կը տեսնի մարտի վերջին։
Նիւթեր ու դրամ ուղարկել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, редакція ‹Норъ Осанкъ›, արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la revue ‹Nor Hossank›.
Ծանօթ.—Աստղանիշներով անձինք, մինչև մարտի 1-ը, արդէն գրաւոր կամ բերանացի յայտնել են իրանց համաձայնութիւնը։
(17, 21.) 196. 3—3

Типографія канцеларіи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный